ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

---

« 27 » փետրվար 2024թ. No 1062 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 19-րդ հավելվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/865-24 առ 16.02.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դույեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով գրանցել երաշխավորված 2 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1)Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Տրիֆաս 5 դեղահատեր (N 18580) և Տրիֆաս 10 դեղահատեր (N 18581) դեղերի գրանցման հավաստագրերը համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) Ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6.Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature



X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի փետրվարի « 27 » - ի N 1062 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով

գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տրիֆաս 5 | տորասեմիդ | դեղահատեր | 5մգ; (30/3x10/) բլիստերում | Բեռլին-Քեմի Ա.Գ., Գլինիկեր Վեգ 125, 12489 Բեռլին- փաթեթավորող, որակի (մանրէաբանական) և բաց թողնման հսկող, Բեռլին-Քեմի Ա.Գ., Տեմպելհոֆեր Վեգ 83, 12347 Բեռլին, Գերմանիա- բալք արտադրող, 1.Բեռլին-Քեմի Ա.Գ., Տեմպելհոֆեր Վեգ 83, 12347 Բեռլին, Գերմանիա, 2.Բեռլին-Քեմի Ա.Գ., Գլինիկեր Վեգ 125, 12489 Բեռլին, Գերմանիա- որակի հսկող (ֆիզիկոքիմիական) | Գերմանիա | Բեռլին-Քեմի ԱԳ, Գլինիկեր Վեգ 125, 12489 Բեռլին | Գերմանիա | Դ | 21931 (007305) 15.02.2024 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Տրիֆաս 10 | տորասեմիդ | դեղահատեր | 10մգ; (30/3x10/) բլիստերում | Բեռլին-Քեմի Ա.Գ., Գլինիկեր Վեգ 125, 12489 Բեռլին-փաթեթավորող, որակի (մանրէաբանական) և բաց թողնման հսկող, Բեռլին-Քեմի Ա.Գ., Տեմպելհոֆեր Վեգ 83, 12347 Բեռլին, Գերմանիա- բալք արտադրող, 1.Բեռլին-Քեմի Ա.Գ., Տեմպելհոֆեր Վեգ 83, 12347 Բեռլին, Գերմանիա, 2.Բեռլին-Քեմի Ա.Գ., Գլինիկեր Վեգ 125, 12489 Բեռլին, Գերմանիա- որակի հսկող (ֆիզիկոքիմիական) | Գերմանիա | Բեռլին-Քեմի ԱԳ, Գլինիկեր Վեգ 125, 12489 Բեռլին | Գերմանիա | Դ | 21932 (007305) 15.02.2024 |